## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/05 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «06» մարտի 2020թ.

2020թ-ի մարտի 6-ին, ՀՀ, ք.Երևան, Միասնիկյան 20 հասցեում գտնվող «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև ՀՈԱԿ) վարչական շենքում տեղի ունեցավ ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/05 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները

| | |
|---|---|
| Ս. Զաքարյան | ՀՈԱԿ-ի կենդանիների սննդի պատասխանատու-խոհարար՝ նախագահ, |
| Վ. Մարգարյան | ՀՈԱԿ-ի գործավար-քարտուղար՝ անդամ, |
| Հ. Մանասարյան | ՀՈԱԿ-ի հաշվապահ՝ անդամ, |
| Լ. Չիլինգարյան | ՀՈԱԿ-ի կենդանաբույժ՝ անդամ |

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Վ. Եսայանը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Զաքարյանը, իսկ քարտուղարն էր՝ Վ. Եսայանը

### ՕՐԱԿԱՐԳ

1. 6-րդ չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
2. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

### 1. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց որ, ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/05 ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով փետրվարի 5-ին որպես ընտրված մասնակից

ճանաչված Ալեքսանդր Վարդանյան Ա/Ձ-ն ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/05 ծածկագրով գնման ընթացակարգի իրավերով սահմանված կարգով իր կողմից հաստատված պայմանագրերը չի ներկայացրել պատվիրատուին և զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 6-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել Ցիկլոիդ ՍՊԸ-ին:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

## 2. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց 6-րդ չափաբաժնի մասով պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Զաքարյան

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Մարգարյան

Հ. Մանասարյան

Լ. Չիլինգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Եսայան